ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1526

13.04.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Այս թվականի ապրիլի 9-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Ապարանի ՁՊՎ: Այցելության ընթացքում արձանագրվել են թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. Առաջին և երկրորդ խցերի ջրի ծորակները խափանված էին և լավ չէին գործում:
2. ՁՊՎ-ում առկա ժամկետանց դեղորայքի ոչնչացման մեխանիզմը տվյալ բաժնում չի գործում, իսկ հերթապահ մասի պետը պարզաբանեց, որ դեղորայքի ժամկետը անցնելու դեպքում՝ զցում են աղբամանը :
3. Բուժսենյակի լվացարանը գտնվում էր կեղտոտ վիճակում:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՍԲ № 1675
«15» 04 2015 թ.

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՍԲ № 2366
«15» 04 2015թ.

Խախտումներ՝

1. Ըստ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության >> գրանցամատյանի կարելի է եզրակացնել, որ ընդհանրապես բուժզննությունը ճիշտ չի իրականացվում: Օրինակ՝ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանի 10-րդ համարի տակ գրանցված է Գարեգին Երվանդի Ավետիսյանը, ով ՁՊՎ ընդունվելուց 03.02.2015թ-ին ժամը 13.05-ին ենթարկվել է բուժզննության

ՀՀ ք.Երևան 0009, Սարմենի 60
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

հերթապահ ոստիկանների կողմից և գրանցվել է, որ չունի գանգատներ: <<Բուժզննության պահին հայտնաբերված հիվանդություններ>> աղյուսակում գրված է չկա ոչինչ, իսկ <<առաջին բուժօգնության բնույթը, ձեռնարկված միջոցները>> աղյուսակում նշված է, որ ձախ դաստակի շրջանում առկա է վիրակապ: Չի հրավիրվել բուժաշխատող, պարզելու նրա մարմնական վնասվածքի պատճառը և աստիճանը: Սակայն հաջորդիվ հրավիրվել է շտապ օգնություն՝ բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Դիտորդական խումբը համոզված է, որ ընդհանրապես բուժզննությունը տվյալ բաժնի ՀՊՎ-ում պատշաճ չի իրականացվում և գրանցվում: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկար – 1/*

2. Այցելության պահին Դիտորդական խումբը արձանագրեց, որ ՀՊՎ-ի զբոսաբակը ամբողջությամբ ձնածածկ էր, այն դեպքում, երբ 01.01.2015թ-ից մինչ Դիտորդական խմբի այցելության օրը՝ 09.04.2015թ գրանցվել է 26 զբոսանքի դուրս բերում: Դիտորդական խումբը համոզված պնդում է, որ տվյալ ՀՊՎ-ում ոչ ոքի զբոսանքի դուրս չեն բերում, և համապատասխան գրառումները կրում են ձևական բնույթ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկար – 2/*

3. Դիտորդական խումբը ընդհանուր ուսումնասիրությունների ժամանակ պարզեց, որ ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Ապարանի ՀՊՎ-ում չի պահպանվում ինչպես ՀՀ Կառավարության ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածների պահելու վայրի ներքին կանոնակարգի 11-րդ կետը, այնպես էլ ՀՀ ոստիկանության համապատասխան գերատեսչության կողմից տրված հանձնարարականը՝ այն է, ՀՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ձերբակալվածին ՀՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին, կապի հնարավոր միջոցով, անհապաղ տեղյակ պահել ձերբակալվածի ընտրած անձին:

Ներկայացվածի հիմք է հանդիսանում ՀՊՎ-ում պատասխանատուների կողմից կազմված նոր տեղեկանքի ձևաչափը, որը միանգամից անձի կողմից ստորագրվելով, հրաժարվում է հարազատին տեղեկացնել իր գտնվելու վայրի վերաբերյալ: Ավելին՝ այցելության պահին ՀՊՎ-ում գտնվող 2 կալանավորներից մեկը, հայտնեց, որ ինքը փոխանցել է հեռախոսահամար հարազատներին տեղեկացնելու համար, բայց երկուսի վերաբերյալ է կազմված էր կից ներկայացվող լուսանկարում առկա տեղեկանքի ձևաչափը: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկար – 3/*

4. Տվյալ ՁՊՎ-ի վարչակազմի համար կալանավորված անձին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում քննիչի գրությունը , այն դեպքում, երբ <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքով կալանավորվածը անձը ՁՊՎ է ընդունվում միայն դատավորի, դատախազի և քննիչի որոշման հիման վրա՝ 3 օր ժամկետով: Նշված գործառույթի վերաբերյալ առկա է նաև հանձնարարական օրենքի տվյալ կետի պահանջը պահպանելու վերաբերյալ: Դիտորդական խումբը պարզաբանում խնդրեց նշվածի վերաբերյալ հերթապահ մասի պետ Կ. Ավետիսյանից, ով էլ մեկնաբանեց, որ ում կալանավորման երկու ամսյա ժամկետը լրանում է, քննիչների գրությունների հիման վրա են տեղափոխում և ընդունում ՁՊՎ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 4,5/*

5. Դիտորդական խումբը ուսումնասիրությունների արդյունքում արձանագրեց, որ կալանավորված անձին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում նաև դատավորների կողմից տրված որոշումը, որում չի նշվում <<պահել ՁՊՎ-ում և ինչքան ժամանակով>>: Տվյալ որոշումներում նշվում է <<ապահովել վերջինիս ուղեկցումը ՀՀ Ո Ապարանի բաժին, այնտեղից էլ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան>>, բայց կալանավորվածները տեղափոխվում են և տվյալ որոշումով պահվում են ՁՊՎ-ում: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 6,7,8/*

6. Ռոմիկ Վաքիլի Միրզոյանը ինքնակամ , մեղայականով ՀՀ ոստիկանության Ապարանի բաժին ներկայացել է 27.01.2015թ-ին ժամը 21.30-ին: Ձերբակալվել է նույն օրը, ժամը՝ 23.45-ին և ՁՊՎ է ընդունվել 28.01.2015թ-ին ժամը 01.05-ին: Ռ. Միրզոյանի արգելանքի տակ գտնվելու առավելագույն 72 ժամը լրանում էր 30.01.2015թ-ին ժամը 21.30-ին, բայց նրան խցից դուրս են բերել և ընդհանուր իրավասության դատարան են տեղափոխել խափանման միջոցը քննարկելու նպատակով 30.01.2015թ-ին ժամը 23.10-ից 23.55 ընկած ժամակահատվածում: Արդյունքում խախտվել է նրա ՀՀ Սահմանդրությամբ նախատեսված իրավունքը: ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Ապարանի բաժնի պետը պարտավոր էր 30.01.2015թ-ին ժամը 21.30, իր իսկ որոշումով տվյալ ձերբակալվածին ազատ արձակած լիներ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 9,10,11,12/*

7. Ուսումնասիրությունների արդյունքում Դիտորդական խումբը արձանագրեց, որ վարույթն իրականացնող մարմինը անարգելք, կարող է մուտք գործել ՁՊՎ և կատարել քննչական գործողություն, այն դեպքում, երբ <<Ձերբակալված և կալանավորված անձնաց

պահելու մասին>> ՀՀ օրենքի 48 հոդվածով, որտեղ նշվում է թե ովքեր ունեն անարգելք մուտքի իրավունք վարույթն իրականացնող մարմնի վերաբերյալ ոչ մի գրառում չկա:

Տվյալ փաստը նաև հաստատում է Ապարանի հերթապահ մասի պետը, որ քննիչները անարգելք մուտքի իրավունք ունեն:

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք մարզի ՀՊՎ-ները չընդհանրացնել և մեկնաբանությունները տալ առանձին:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009, Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1527 <<18>> 05 2015թ.

Ձեր 13.04.2015թ. թիվ 2621/1526 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ ապրիլի 9-ին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արագածոտնի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Դիտորդների խմբի կողմից հայտնաբերված թերությունները վերացվել են, իսկ ոստիկանության Ապարանի բաժնի հերթապահ մասի պետը կրկին իրազեկվել է ժամկետանց դեղորայքի ոչնչացման կարգի մասին:

Խախտումներ.

1. Կալանավոր Գ.Ավետիսյանը 03.02.2015թ. ժամը 13.05-ին ՁՊՎ ընդունվելիս ենթարկվել է անձնական խուզարկության և մարմնի արտաքին զննության, որի ընթացքում նրա ձախ դաստակի շրջանում հայտնաբերվել է մարմնական վնասվածք՝ վիրակապով, ինչի վերաբերյալ իրազեկվել է վարույթն իրականացնող մարմնին, իսկ <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում ՁՊՎ վարչակազմի կողմից կատարվել է ոչ ճիշտ գրառում: Նույն օրը մարմնական վնասվածք հայտնաբերելու կապակցությամբ հրավիրվել է շտապօգնություն, որը բաժին է եկել ժամը 14.05-ին: Բուժաշխատողի կողմից ցուցաբերվել է համապատասխան բուժօգնություն ու գրառումներ կատարվել վերը նշված գրանցամատյանում:

2. Առատ տեղումների պատճառով զբոսաբակը ամբողջությամբ հնարավոր չի լինում մաքրել ձյունածածկույթից, սակայն դրա որոշ հատվածից հեռացվում է ձյունը (որը հստակ երևում է

նաև Ձեր կողմից տրամադրված թիվ 2-րդ լուսանկարում) և պատշաճ կերպով իրականացվում է ՁՊՎ-ում պահվող անձանց զբոսանքը, ինչի վերաբերյալ գրառումներ են կատարվում <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում, որոնք ձևական բնույթ չեն կրում:

3. ՁՊՎ ընդունվող անձանց կողմից ընտրած անձին վերջիններիս գտնվելու վայրի մասին կապի հնարավոր միջոցով ՁՊՎ վարչակազմի կողմից տեղյակ է պահվում և այդ մասին կազմվում տեղեկանք: Որոշ դեպքերում վերջիններս հրաժարվում են տեղեկացնել որևէ մեկին՝ պատճառաբանելով, որ հարազատները տեղյակ են: Այդ պատճառով ոստիկանության Ապարանի բաժնում մշակվել է տեղեկանքի երկու ձև, որոնցից մեկը լրացվում է տեղյակ պահելու վերաբերյալ, որտեղ նշվում է նաև հեռախոսահամարը, իսկ երկրորդը կազմվում է վերջիններիս կողմից հեռախոսահամար չտրամադրելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 11-րդ կետի պահանջների համաձայն՝ ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է **ձերբակալված անձի**՝ ձերբակալվածներին պահելու վայր ընդունվելու կամ մեկ հիմնարկից մյուսը փոխադրվելու մասին անհապաղ տեղյակ պահել ձերբակալված անձի ընտրած անձին: Այսինքն, կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելիս նրանց գտնվելու վայրի մասին որևէ մեկին իրազեկելը ՁՊՎ վարչակազմի պարտականությունների մեջ չի մտնում: Կալանավոր Ռ.Մազմանյանի տեղափոխման վերաբերյալ վերջինիս հարազատներին պարտավոր էր տեղյակ պահել ՔԿՀ-ի վարչակազմը:

4. Կալանավորված անձանց գրություններով, այլ ոչ թե որոշումներով ՁՊՎ ընդունելու փաստը հիմնավորվել է:

5. Կալանավորված անձանց դատական նիստերին մասնակցություններն ապահովելու համար հիմք են ընդունվել դատավորի կողմից տրված որոշումները, որոնց մեջ նշվել են կալանավորին ոստիկանության Ապարանի բաժին տեղափոխելու և նիստին մասնակցությունն ապահովելու ամսաթվերը: Նշված ժամանակահատվածը ինքնին խոսում է այն մասին, որ կալանավորված անձը պետք է պահվի ՁՊՎ-ում, հետևաբար դատավորի կողմից կայացված որոշումներն ի կատար են ածվել և կալանավորված անձինք մինչև դատական նիստի նշանակված օրը պահվել են ՁՊՎ-ում:

6. Ռ.Միրզոյանը 27.01.2015թ. ժամը 21.30-ին մեղայականով ինքնակամ ներկայացել է ոստիկանության Ապարանի բաժին, ձերբակալվել է նույն օրը ժամը 23.45-ին և տեղափոխվել ՁՊՎ: 30.01.2015թ. ժամը 23.10-ից 23.55-ն ընկած ժամանակահատվածում խափանման միջոցը քննության առնելու նպատակով տեղափոխվել է դատարան, որտեղ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը՝ միաժամանակ թույլատրվել է գրավի կիրառումը: Տվյալ դեպքում Ռ.Միրզոյանի իրավունքները չեն խախտվել, քանի որ նա ոստիկանության բաժին է ներկայացել ինքնակամ և մինչև ձերբակալման արձանագրություն կազմելը նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը չի սահմանափակվել:

7. ՀՀ ոստիկանության համար անհասկանալի է, որ դիտորդների խումբն այցելել է ոստիկանության Ապարանի բաժնի ՁՊՎ և միայն այդ ժամանակ հասկացել, որ վարույթն իրականացնող մարմինը անարգել մուտք է գործում ՁՊՎ-ներ, այն դեպքում, երբ <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նշված չէ նրանց ՁՊՎ մուտք գործելու վերաբերյալ: Ի գիտություն դիտորդների խմբին տեղեկացվում է, որ նշված հոդվածը սահմանում է առանց հատուկ թույլտվության անարգել մուտքի և ելքի իրավունք ունեցող անձանց ցանկը, իսկ վարույթն իրականացնող մարմինը

արդեն իսկ ունի հատուկ թույլտվություն, քանի որ նույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանվում է, որ քննչական գործողություններ, ինչպես նաև ամբուլատոր դատահոգեբուժական և այլ փորձաքննություններ անցկացնելու համար ձերբակալվածներին պահելու վայրի տարածքում համապատասխան տարածքներ կամ շինություններ են տրամադրվում: Բացի այդ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով **իրենց վարույթում գտնվող քրեական գործի** շրջանակներում քննիչին վերապահված իրավունքները թույլ են տալիս անարգել մուտք գործել ՁՊՎ-ներ և կատարել քննչական գործողություններ:

Այսպիսով, հիմնավորվել են <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում ոչ ճիշտ գրառումներ կատարելու և կալանավորված անձանց գրություններով, այլ ոչ թե որոշումներով ՁՊՎ ընդունելու փաստերը, ինչի համար ոստիկանության Ապարանի բաժնի հերթապահ մասի պետը խիստ նախազգուշացվել է:

ՀՀ ոստիկանության շտաբ